ՀՏԴ 711.57; 727.7 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Է. Մխիթարյան,
Ա.Յու. Սաֆարյան

ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերլուծվել են Հայաստանի ներկայիս տարածքում գտնվող տարբեր պատմական շերտեր ընդգրկող պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և թանգարանացման խնդիրները: Դիտարկվել են Էրեբունի, Շենգավիթ, Կարմիր բլուր, Մեծամոր, Զվարթնոց արգելոց թանգարանների բացօթյա և ներշենքային ցուցադրությունները, Էջմիածնի Մայր տաճարի, Տաթևի ձիթհանի (որպես արտադրական կառույցի թանգարանացման օրինակ), ինչպես նաև Արցախի Տիգրանակերտի թանգարանային ցուցադրությունները:

Ներկայացվել են այն միջոցառումները, որոնց իրականացումը կնպաստի ճարտարապետական հուշարձանների պահպանմանը, լիարժեք և համակողմանի ցուցադրությանը, ինչպես նաև հանրահռչակմանը:

Առանցքային բառեր. *մշակութային արժեք, հուշարձան, թանգարան, ցուցադրություն:*

Մշակութային արժեքների հավաքման, պահպանման, ուսումնասիրության և հասարակության լայն խավերին հասցնելու համար ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում կարևորվում է թանգարանների դերը: Ժամանակակից թանգարանը դա մշակույթի անցյալի և ներկայի, նրա հոգևոր ձգտումների արտահայտողն է: Այն մեծ դեր ունի մարդու կրթության, դաստիարակության, հոգեկերտման գործում: Պատմամշակութային արժեքների ցուցադրությունների հիմքում ընկած են սեփական ժողովրդի հարուստ մշակութային ժառանգության ըստ արժանվույն պահպանումը և համակողմանի, գիտական ու արդիական ձևով ներկայացումը, որի արդյունքում այն ազգային արժեքից վերածվում է համազգայինի, ձեռք է բերում համաշխարհային ճանաչում:

Թանգարանները հիմնականում կարող են լինել երկու տիպի՝ փակ (ներշենքային) և բացօթյա: Փակ տիպին են պատկանում տարբեր տեսակի և նշանակության ցուցադրությունների համար կառուցված շենքերը, որոնցում կատարվում են մշտական կամ ժամանակավոր ցուցադրություններ: Պատմության թանգարանների ցուցասրահներում ներկայացվում են պատմական տարբեր փուլերի և տարբեր տարածաշրջանների կենցաղն ու մշակույթը ներկայացնող իրեր՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Սակայն թանգարանային շենքի ներսում հնարավոր չէ անշարժ հուշարձանների՝ հնավայրերի, պաշտամունքային կառույցների (եկեղեցիներ, վանքային համալիրներ), ինչպես նաև ազգագրությանն առնչվող նյութական մշակույթի հուշարձանների (հացատուն, մարագ, հնձան, գյուղական կամ քաղաքային տներ և այլն) ներկայացումը: Դա հնարավոր է իրականացնել տեղում՝ բացօթյա ցուցադրության կազմակերպման միջոցով:

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքը հարուստ է տարբեր պատմական շերտեր ընդգրկող պատմաճարտարապետական հուշարձաններով՝ հնագույն, ուրարտական, անտիկ ժամանակաշրջանների բնակավայրեր, դամբարանադաշտեր, միջնադարյան հոյակերտ կոթողներ, ժամանակակից կառույցներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին պատմություն է, խոսուն վկա՝ անցյալի պատմության այն էջերի, որոնց միջով անցել է և որոնք իրենց կնիքն են թողել նրանց պատերի, քարերի, քանդակազարդ բեկորների վրա:

Դրանցից շատերն ունեն ոչ միայն ազգային, այլ նաև համազգային արժեք ու նշանակություն, ինչին նպաստում է նաև հուշարձանի պահպանումը և ճիշտ ներկայացումը: Պատահական չէ, որ Հայաստանն անվանում են «թանգարան բաց երկնքի տակ»: Կարելի է ասել, որ Հայաստանի տարածքը մշտական ցուցադրությամբ ցուցասրահ է, որտեղ որպես ցուցանմուշներ հանդես են գալիս ճարտարապետական կառույցները, ունենալով իրենց մշտական տեղն այդ «սրահում»: Ինչպես ցանկացած արժեքավոր ցուցանմուշ, որը մինչև թանգարան մտնելն անցնում է երկար ճանապարհ (պեղում, մշակում, վերականգնում, ուսումնասիրում, չափագրում), այնպես էլ հուշարձանը, որպես ցուցադրության հիմնական առարկա, կարիք ունի գիտական ուսումնասիրության (պեղում, չափագրում, գծագրերի կազմում), վերկանգնման (ամրակայում, մասնակի կամ ամբողջական վերականգնում), պահպանման և հանրահռչակման: Յուրաքանչյուր կառույց պետք է ներկայացվի արժանավայել ձևով, ընդգծելով նրա ազգային արժեքը և վերաիմաստավորումը համազգային համատեքստում: Վերջինիս համար անհրաժեշտ են մի քանի լեզուներով տեղեկատվական վահանակների կազմում, առանձին արժեքավոր բեկորների ցուցադրության կազմակերպում, անհրաժեշտության դեպքում՝ հուշարձանը ճարտարապետական (հորինվածքային, գեղարվեստական, շինարարական) և պատմական տեսանկյունից ավելի մանրամասն պատմող թանգարանային մասի ստեղծում:

Հուշարձանի մասին առավելագույն տեղեկությունների արդիական ներկայացմամբ հնարավոր կլինի ավելի ամբողջական պատկերացում տալ կառույցի՝ նրա պատմական անցյալի, ճարտարապետական, ծավալատարածական հորինվածքի, առանձին տարրերի, այդ հուշարձանի հետ կապված պատմական իրադարձությունների մասին: Այսինքն, հուշարձանը պետք է ներկայացնել այնպիսի մանրամասնությամբ, որ հեռանալիս այցելուի մոտ չմնան հարցականներ և նա կարողանա ստանալ իր բոլոր հարցերի պատասխանները, լինի լիովին բավարարված: Կարծում ենք, որ հուշարձանի լիարժեք լույսի տակ ներկայացմանը կնպաստի ինչպես առանձին տեղեկատվական վահանակների տեղադրումը, այնպես էլ հուշարձանի տարածքում կամ ներսում առանձին մանրամասների և հնագիտական պեղումների արդյունքների ցուցադրումը:

<u>Տեղեկատվական վահանակների</u> տեղադրման գործընթացը սկսվել է 2008թ.-ից՝ Հայկական իրերի, ճարտարապետական դետալների փոքրիկ ցուցադրության կազմակերպումը հուշարձանների ճանաչման ծրագրի ղեկավար ամերիկացի Ռիչարդ Նայի նախաձեռնությամբ,

որի նպատակն էր տեղեկատու վահանակների միջոցով զբոսաշրջիկներին ծանոթացնել Հայաստանի պատմամշակութային կոթողներին: Արդյունքում տեղադրվեցին 5 լեզվով 382 տեղեկատու վահանակներ Սանահինում, Գոշավանքում, Աղթալայում և 150-ից ավելի հնավայրերում, որոնք օգնում էին այցելուին հուշարձանի պատմությանը ծանոթանալ ինքնուրույն, առանց զբոսավարի: 2013 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարության և «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» մշակութային հասարակական կազմակերպության (ԱՄԱՓ) միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ բազմալեզու տեղեկատվական վահանակներ տեղադրելու մասին» համաձայնագիր: Դրանք պատմամշակութային տեղեկատվություն են ներկայացնում 5 լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն ու ֆրանսերեն (նկ. 1): Ծրագրի նախաձեռնողը Ռիչարդ Նայն է: Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտալտոնի հովանավորությանը և ՀՀ մշակույթի նախարարության օժանդակությանը զուգահեռ՝ «ՎիվաՍելը» դարձավ ծրագրի համագործակցող հովանավորը: Ծրագրին օժանդակում է նաև ԻԿՕՄՕՍ/Հայաստան հասարակական կազմակերպությունը [1]:

Նկ. 1. Տեղեկատվական վահանակներ Հաղպատում

Պատմամշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման գործում տեղեկատվական վահանակներից բացի կարևոր դեր ունեն նաև հուշարձաններին կից թանգարանային շենքերը:

Դիտարկենք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող տարբեր պատմական փուլերի հուշարձաններ, ինչպես նաև այդ հուշարձանների համար որպես խոսուն ցուցատախտակ հանդես եկող թանգարանային շենքերը: Վերջիններս ստեղծված են ոչ միայն հուշարձանն ավելի մանրամասն լուսաբանող ցուցադրության (առանձին արժեքավոր բեկորներ, ճարտարապետական մանրամասներ, հնագիտական իրեր, լուսանկարներ, գծագրեր, ֆիլմեր) կազմակերպման համար, այլ նաև ունեն գիտամշակութային նշանակություն:

<u>Էրեբունի արգելոց-թանգարան:</u> Էրեբունի քաղաք-ամրոցը, սեպագիր արձանագրության համաձայն, հիմնադրել է ուրարտական տերության հզորագույն արքաներից մեկը՝ Արգիշտի Ի-ը Ք.ա. 782 թ.: Այն հանդիսացել է Արարատյան դաշտի կարևորագույն վարչական, տնտեսական

կենտրոն, ինչպես նաև՝ ռազմական կարևոր հենակետ: Կազմված է եղել միջնաբերդից և բուն քաղաքից: Ուրարտական պետության անկումից հետո էլ (VI դ. մ.թ.ա.) Էրեբունին շարունակել է գոյատևել աքեմենյան, վաղ հայկական և հելլենիստական ժամանակներում, ինչի մասին վկայում են ամրոցի ճարտարապետական կառույցները և պեղումներից գտնված հնագիտական առարկաները (երկու միլեթյան դրամներ, Օգոստոս կայսեր դրամը, արծաթյա երեք եղջերագավաթներ և մեկ սափոր): Էրեբունի ամրոցի տարածքում պեղման և ուսումնասիրման աշխատանքներ կատարվել են 1950-1968թթ. (Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ), այնուհետև ընդմիջումներով մինչև 2004թ. և 2006թ.-ից առ այսօր: Ամրոցի միջնաբերդում 2008թ.-ից իրականացվող հայ-ֆրանսիական գիտատեխնիկական համագործակցության շրջանակում հուլիսի 2-ից մեկնարկել է 2013թ. պեղումների գործաշրջանը, որի ձեռնարկողը, Էրեբունիե պատմահնագիտական արգելոց-թանգարանն է: Պեղումների արդյունքում բացվել են պաշտամունքային, պալատական և տնտեսական կառույցներ: Կատարվել են ամրակայման, կոնսերվացման, տարածքի բարեկարգման աշխատանքներ, ինչը հնարավորություն է տալիս այցելուին շրջել միջնաբերդում, ծանոթանալ հուշարձանների հետ:

Արին Բերդ բլրի վրա՝ ուրարտական Էրեբունի ամրոցի հարևանությամբ 1968թ. հիմնվել է Էրեբունի թանգարանը (նկ. 2), որի բացումը համընկել է Երևան քաղաքի 2750-ամյակի տոնակատարությունների հետ: Թանգարանի շենքի (ճարտ.՝ Շ. Ազատյան, Բ. Արզումանյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան) ծավալատարածական հորինվածքի հիմքում ընկած են ուրարտական պալատական կառույցների, ինչպես նաև ժողովրդական բնակելի տան հորինվածքները:

ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 7-ի N313 որոշմամբ՝ վերանվանվելով որպես պատմահնագիտական արգելոց-թանգարան, այն այսօր գործում է, «Կարմիր բլուր» և «Շենգավիթ» մասնաճյուղերով՝ հանդիսանալով հանրության համար այցելելի միակ հնագիտական արգելոց-թանգարանը Երևան քաղաքում և կարևոր ուրարտագիտական կենտրոն՝ տարածաշրջանում [2]: Արգելոց-թանգարանի գործունեության նպատակը մշակութային արժեք ներկայացնող նշյալ անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման, հանրահռչակման, օգտագործման, ինչպես նաև հուշարձանախմբերի, հուշարձանների համալիրների պատմական միջավայրի և դրան հարող տեղանքապատկերների ամբողջական պահպանության ապահովումն է, այդ և այլ հուշարձաններից հայտնաբերված թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառումը, թանգարանային հավաքածուի անխաթար և ամբողջական պահպանության ապահովումը:

Թանգարանի երկհարկանի շենքի առաջին հարկի նախասրահում գտնվում է տոմսերի, գրքերի, բուկլետների, հուշանվերների վաճառքի փոքրիկ սրահը, որտեղ վաճառվում են նաև ցուցանմուշների կրկնօրինակները, վարչական և գիտաշխատողների սենյակները, ինչպես նաև ժամանակավոր ցուցադրությունների սրահը: Երկրորդ հարկում, ներքին բաց բակի շուրջը տեղակայված են երկու հիմնական ցուցադրություններով ցուցասրահները, որտեղ ցուցադրվում

են ամրոցի տարածքից հայտնաբերված քարե արձանագրություններ (նկ. 3), հնագիտական իրեր, գինու հսկայական կարասներ, զենքեր, աշխատանքային գործիքներ, հացահատիկային կուլտուրաներ:

Նկ. 2. Էրեբունի թանգարանի շենքը

Նկ. 3. Քարե սեպագիր արձանագրություններ

Թանգարանային հավաքածուի բացառիկ արժեքները բազմիցս ցուցադրվել են Լուվրում (Ֆրանսիա), Մետրոպոլիտեն թանգարանում (ԱՄՆ), Էրմիտաժում (Ռուսաստան), Բրիտանական թանգարանում (Մեծ Բրիտանիա) և հանրահայտ այլ մշակութային օջախներում [3]: Թանգարանի շենքի ձախ կողմի աստիճանները տանում են դեպի բարձր բլուրը, որի վրա են գտնվում Էրեբունի ամրոցի ամրակայված և մասնակի վերականգնված հուշարձանները: Այցելուների համար նախատեսված են բարեկարգ ճանապարհներ և բազմալեզու տեղեկատվական վահանակներ: Տարածքում շարունակվում են պեղման աշխատանքները (նկ.4):

ա

բ

գ

Նկ. 4. Էրեբունի արգելոց-թանգարան.
ա-ամրոցի պարիսպները, բ-Խալդի աստծո տաճարը, գ-պեղումներ ամրոցի տարածքում

<u>Մեծամոր արգելոց-թանգարան</u>**:** Մեծամոր հնագույն ամրոց-բնակատեղին համաշխարհային մշակույթի յուրահատուկ հուշարձաններից է: Այն գտնվում է Երևանից 35 *կմ* հարավ-արևմուտք, Տարոնիկ գյուղից ոչ հեռու, Մեծամոր գետի ափին: 1965թ. մինչև այժմ Մեծամորում պարբերաբար պեղումներ են կատարվում: Պեղված մշակութային շերտերը վերաբերում են բրոնզի և երկաթի դարաշրջաններին: Պեղված նյութերը վկայում են, որ բրոնզի դարաշրջանում

(մ.թ.ա. IV-II հազ.) Մեծամորը մշակույթի ծաղկուն կենտրոն էր: Լավ պահպանվել է պղնձաձուլարանի ամբողջ համակարգը՝ հալոցը և հնոցները, որոնք կառուցվել են ժայռերի մեջ: Գիտնականները պարզել են, որ Մեծամորը խոշոր բնակատեղի էր, որը զբաղեցնում էր 10,5 *հա* տարածք, ուներ կիկլոպյան պարսպով շրջապատված միջնաբերդ, զիկուրատ–«աստղադիտարան»:

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացվել է 1968թ. (նկ. 5): Ներկայումս այն գործում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում: Այստեղ հավաքվել և ցուցադրվել են հուշարձանից պեղված 27000-ից ավել առարկաներ: Առաջին հարկում ցուցադրվում են ամրոցում և դամբարանադաշտում հայտնաբերված նյութերը, որոնք վերաբերում են վաղ բրոնզե դարից մինչև ուշ միջնադարին: Երկրորդ հարկում ներկայացված են Մեծամորի հնագույն արհեստներն ու ծեսերը (նկ. 6): Նկուղային հարկում գտնվում է հատուկ զետեղարանը, ուր ներկայացված են Վանի թագավորության շրջանի ոսկե, արծաթե, սաթե, կիսաթանկարժեք քարերից, մածուկից պատրաստված եզակի մշակութային արժեքներ:

Նկ. 5. Մեծամոր թանգարանի շենքը

Նկ. 6. Մեծամոր թանգարանի ցուցասրահ

<u>Զվարթնոց արգելոց-թանգարան</u>: Զվարթնոց արգելավայրը ստեղծվել է Էջմիածնի միաբան Խաչիկ վարդապետ Դադյանի նախաձեռնությամբ 1900-1907թթ., հաշվի առնելով 1904թ. Ճարտարապետ Թորոս Թորամանյանի ղեկավարությամբ պեղումներով բացված Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի (կառուցված 641-652թթ.) և հարակից շինությունների ավերակների պատմաճարտարապետական բացառիկ նշանակությունն ու պատմահնագիտական գտածոների արժեքը: Իրավամբ տաճարը խոսուն վկա է ժամանակի վարպետների ճարտարապետական և շինարարական մտքի թռիչքի [4]:

1924-1944թթ. արգելավայրը գործել է որպես «Զվարթնոցի» հնագիտական վայր, 1944-1986թթ.՝ «Զվարթնոց» հուշարձան թանգարան, 1986-1989թթ.՝ «Զվարթնոց» պատմաճարտարապետական թանգարան, 1990-2003թթ.՝ «Զվարթնոց» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան: Այն 2003թ. հունիսից գործում է ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում՝ «Զվարթնոց»

պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղ անվանումով: Արգելոց-թանգարանն ունի երկու՝ «Պահպանման և շահագործման» ու «Հանրահռչակման, գիտահետազոտական և ֆոնդային աշխատանքների» բաժիններ: Թանգարանային շենքում անձնակազմի համար նախատեսված են աշխատասենյակներ: Արգելոց-թանգարանում այցելուների համար անցկացվում են էքսկուրսիաներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Որպես գիտալուսավորչական, գիտահետազոտական, մշակութային գործունեություն իրականացնող, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանն իրականացնում է Զվարթնոց պատմաճարտարապետական հուշարձանի, հուշարձանի տարածքից հայտնաբերված և այդ հուշարձանին վերաբերող մշակութային այլ արժեքների պահպանման, ուսումնասիրման, հանրահռչակման, օգտագործման և պահպանման գործառույթներ [5]:

1957թ. ՀԽՍՀ կառավարության որոշմամբ հուշարձանի տարածքում վերականգնվել է VII դ. բնապատմական միջավայրը, կատարվել է տարածքի կանաչապատում, ստեղծվել բնապատմական միջավայր և այգեպուրակային համալիր: Տաճարային համալիրում ստեղծված են համապատասխան պայմաններ հաշմանդամների և կույրերի սպասարկման համար: VivaCell MTS-ի աջակցությամբ տաճարի տարածքում տեղադրվել են տեղեկատվական վահանակներ (հինգ լեզուներով) և կույրերի համար նախատեսված Բրայլյան համակարգով կազմված վահանակ: 2012 թ. գարնանից հուշարձանը այցելուներին է ներկայանում նաև գեղարվեստական լուսավորության և ձայնային էֆեկտների գեղեցիկ համադրությամբ (նկ. 7):

ա

Բ

Նկ. 7. Մասնակի վերականգնված Զվարթնոցի տաճարը
ա-ցերեկը, բ- գիշերային լուսավորության ժամանակ

Զվարթնոց տաճարի հարավային կողմում 1936-1937թթ. ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանի նախագծով և հնագետ Կարո Ղաֆադարյանի ղեկավարությամբ կառուցվել է Զվարթնոցի թանգարանային շենքը, որի բացումը կատարվել է 1937 թ. նոյեմբերիր 7-ին: Սկզբում այն ունեցել է փոքր ցուցադրություն՝ ձևավորված մեկ սրահի մեջ՝ 80 *քմ* մակերեսով: 1988թ. ճարտարապետ Լ.Սադոյանի նախագծով սկսվել են թանգարանային շենքի ընդարձակման աշխատանքները և այն գրեթե քառապատկվել է, իսկ 2003թ. ավարտվել են թանգարանային շենքի հարդարման աշխատանքները: Այժմ ցուցադրության համար թանգարանն ունի երեք

սրահներ՝ երկուսը մշտական, իսկ մեկը՝ ժամանակավոր և շրջիկ ցուցադրությունների կազմակերպման համար: Թանգարանի հիմնական և գիտաօժանդակ ֆոնդերում, ինչպես նաև բաց ցուցադրությունում կան 10 *հազ.*-ից ավելի միավոր նյութեր, որոնցից առավել ամբողջականները տեղ են գտել մշտական ցուցադրության մեջ: Թանգարանում 1937թ. կազմակերպված առաջին մշտական ցուցադրության հեղինակը եղել է հնագետ Կարո Ղաֆադարյանը, իսկ 1981թ. մայիսին կազմակերպված երկրորդ մշտական ցուցադրության հեղինակը՝ Վարդան Հարությունյանը:

Այժմ իրականացված է երրորդ մշտական՝ արդի թանգարանագիտական չափանիշներին համապատասխանող գիտական ցուցադրությունը (կազմակերպիչներ՝ Հ. Սամուելյան, Ի. Ռնազյան): Թանգարանի նախասրահում գտնվում են տոմսերի, գրքերի և բուկլետների վաճառքի տաղավարը, տեղադրված է զգայուն (սենսորային) էկրանով համակարգիչ, որի միջոցով այցելուները հնարավորություն ունեն լրացուցիչ և համակարգված տեղեկություններ ստանալ Զվարթնոցի և Հայաստանի մյուս պատմամշակութային արգելոց-թանգարանների մասին: Նախասրահում են տեղադրված նաև կույրերի համար նախատեսված՝ Բրայլյան այբուբենով գրված բացատրագիրը, որը տեղեկություններ է հաղորդում տաճարի պատմության վերաբերյալ: Ցուցադրությունը բացվում է՝ նախասրահի հանդիպակած պատին, օրգանական ապակու վրա գրված Խրիմյան Հայրիկի խոսքերով՝ ուղղված Ներսես Գ Շինող կաթողիկոսին, որի նախաձեռնությամբ կառուցվեց Զվարթնոց (Ս. Գրիգոր եկեղեցի) տաճարը. «Խրիմյան Հայրիկից յիշատակ հավերժական Ներսիսի Շինող Հայրապետին, որ ընդ հողով ծածկեալ էր ելի իլոյս, անդուլ աշխատությամբ տ. Խաչիկ վրդ. տեսնիլ այս չնաշխարհիկ գիւտ սրբանուէր վիճակեցաւ Հայոց Հայրիկին դեկտ. 4 1901 ամի»:

Ցուցադրության առաջին սրահում տեղ են գտել պեղումների ժամանակ Զվարթնոցի տարածքից հայնաբերված միջնադարյան կավե 2 կարասները (յուրաքանչյուրը 500 *լ* տարողությամբ), հայատառ գրությամբ արևային բոլորակ ժամացույցը, Ներսես Գ կաթողիկոսի թողած «Ներսեսն է կառուցել, հիշեցե՛ք» հունատառ արձանագրությունը, «Յոհան» մակագրությամբ շինարար վարպետի բարձրաքանդակը, ինչպես նաև տաճարից մնացած այլ զարդաքանդակ բեկորներ: Ցուցադրվում են նաև հնագիտական իրեր՝ պեղված հուշարձանի տարածքից՝ բազմերանգ խեցեղենի և զարդերի նմուշներ, մետաղյա գործիքներ, զամեր և խոփեր (նկ. 8): Սրահը հագեցած է նաև բացատրական տեքստերով՝ հայ պատմիչների վկայությունները տաճարի կառուցման վերաբերյալ, զվարթնոցատիպ կառույցների վերլուծություններ և այլ:

Երկրորդ սրահում թանգարանի այցելուներին ներկայացվում է տաճարի առաջին պեղումների ընթացքը, պեղումներից հայտնաբերված պատմահնագիտական արժեքները, ինչպես նաև հնավայրի պեղումների մասին տեղեկություններ, փաստավավերագրական լուսանկարներ, փաստաթղթեր, նամակներ, չափագրություններ և այլն: Սրահի կենտրոնում ցուցադրվում է Զվարթնոցի տաճարի մանրակերտը՝ ըստ Թորամանյանի վերակազմության նախագծի (նկ. 9):

Նկ. 8. Զվարթնոց թանգարանի առաջին ցուցասրահը

Նկ. 9. Զվարթնոցի մանրակերտը (երկրորդ սրահ)

Բացօթյա ցուցադրությունում ցուցադրվում են Զվարթնոց տաճարի ավերակների ամրակայած և մասնակի վերականգնած պատերի մնացորդներ, սյուների խարիսխներ, բներ, զամբյուղախոյակ և արծվախոյակ սյունաշարեր, կամարներ, բարավորների քիվեր, թաղակապ ծածկերի կրաշաղախե խոշոր զանգվածներ, մկրտության ավազան, ջրհոր, տաճարից պահպանված զարդաքանդակներ, տաճարի հարավարևմտյան մասում գտնվող կաթողիկոսական պալատը, վանականների խցերը, բաղնիքը, 4…5-րդ դարի բազիլիկ եկեղեցու մնացորդները և գինու հնձանը, պեղումների ընթացքում համալիրի տարածքից հայտնաբերված մ.թ.ա. 2…1-ին հազարամյակներով թվագրվող կլոր սալաքարը (չորս տարբեր փոսիկներով և առվակով), նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքային ֆալլոտիպ կոթողը, ինչպես նաև ուրարտական Ռուսա II արքայի (Ք. ա. 685-645թթ.) սեպագիր արձանագրությունը:

Սկսած 1937թ., արգելոց-թանգարանում կազմակերպված բաց և փակ ցուցադրությունների հիմնական նպատակը ոչ միայն Զվարթնոցի պատմության և ճարտարապետության ներկայացումն է եղել, այլև պատկերացում տալ հայկական ճարտարապետության ակունքների, նրա ավանդույթների և, ընդհանրապես, հայ ճարտարապետության վրա Զվարթնոց տաճարի թողած ազդեցության և հայ մշակույթի պատմության մեջ նրա խաղացած դերի մասին: 2000 թ.-ից ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության Կենտրոնի որոշմամբ, Զվարթնոցն Էջմիածնի Մայր տաճարի և Վաղարշապատի մյուս եկեղեցիների հետ գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության ցանկում:

Ինչպես Զվարթնոցում, այնպես էլ դիտարկված մյուս պատմամշակութային արգելոց թանգարաններում (Էրեբունի, Շենգավիթ), աշխատակազմի և պատմական միջավայրի պահպանության ծառայության անձնակազմի հետ համատեղ, կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ տոնակատարություններ, համերգներ, հանդիպումներ, որոնք իրականացվում են կրթական, ճանաչողական, հանրահռչակման ուղղություններով: Թանգարանային միջավայրում համերգները, հանդիպումները և տոներն ուղղված են հանրության

համեմատաբար նոր թանգարանային պահանջմունքների բավարարմանը և ժամանցային բնույթ են կրում [6]:

Եկեղեցի-թանգարան: Հայաստանում թանգարանների ձևավորման գործում մեծ ներդրում են ունեցել նաև հոգևորականները: Տաճարային հավաքածուներն ու գանձատները գիտնականները համարում են թանգարանների նախատիպեր [7]: Նշենք, որ դեռևս վաղ միջնադարում հայկական եկեղեցիների ավանդատներում պահվում էին թանկարժեք զգեստներ, մարգարտակուռ թագեր ու թասակներ, ոսկե և արծաթե սկիհներ, արծաթակազմ մագաղաթյա ձեռագրեր և այլ արժեքավոր բարձրարվեստ իրեր: Խոշոր վանքային համալիրները (Սանահին, Հաղպատ, Հավուց Թառ, Գոշավանք) այդ նպատակի համար ունեին առանձին կառուցված գանձատներ [8]:

Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանը կառուցվել է 1869թ. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այն գտնվում է Տաճարի արևելյան մասի ողջ լայնությամբ: Մինչ թանգարանի կառուցումը, ավանդական սրբազան մասունքները պահվել են Ավագ Խորանին կից արևելյան պահոցներում: Թանգարանի կառուցման շնորհիվ տեղադրվեցին պահարաններ և ցուցափեղկեր, որոնք ավելի հարմարավետ էին ցուցադրության համար:

Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում պահվող արժեքավոր գանձերի ցուցադրությունը կազմակերպվում է երկու ցուցասրահներում, որոնց կենտրոններում տեղադրված ապակեպատ սեղաններում ներկայացվում են արծաթակազմ մագաղաթյա մատյանները, իսկ պատերի ողջ պարագծով տեղակայված փայտյա պահարաններում՝ սրբազան գանձերը (նկ. 10): Ցուցադրվող սրբազան գանձերից են Ս. Գեղարդը, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Նոյյան Տապանի մասունքը, Խոտակերաց Սուրբ Նշան մասանց պահարանը՝ Հիսուս Քրիստոսի Ս. Խաչափայտի մասունքներով, ձեռագիր մատյաններ և այլ արժեքավոր նմուշներ:

Նկ. 10. Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանի ցուցասրահները

Թանգարանային ցուցադրությունն ավելի հետաքրքրական է դարձնում Տաճարի Ավագ խորանի տակ գտնվող 301-303 թթ. Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնած Խորանի մնացորդները, ինչպես նաև Ալ. Սահինյանի կողմից պեղումների ժամանակ հայտնաբերված հեթանոսական կրակարանը (որի վրա կառուցվել էր Խորանը) դիտելու հնարավորությունը: Այդ ցուցադրությունը հնարավորություն է տալիս այցելուներին տեսնել տաճարի բազմաշերտ

կառուցվածքը, պատկերացնել այն փոփոխությունները, որոնք կրել է Տաճարը պատմական տարբեր փուլերի զարգացման ճանապահին:

Տաթևի ձիթհանի թանգարանացումը: Միջնադարի կրոնական համալիրներում հանդիպում ենք ձիթհանների, հնձանների, ջրաղացների, որոնք հայ ճարտարապետության արտադրական կառուցվածքների հետաքրքրքական օրինակներից են: Հայաստանում միջնադարից մեծ քանակով ձիթհաններ են հասել: Ձիթհաններ են ունեցել աշխարհիկ և վանական խոշոր ֆեոդալական տնտեսությունները (Անի, Հաղպատ): 18-րդ դարում երեք ձիթհան է ունեցել էջմիածնի վանքը:

Միջնադարյան բազմասենյակ ձիթհանի օրինակ է Տաթևի վանքի բավականին լավ պահպանված կառուցվածքը (18-րդ դ.), որը գտնվում է վանքի պարիսպներից մոտ 20 *մ* հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևելք: Այն բաղկացած է չորս սենյակներից, ունի կոմպակտ հատակագիծ և կառուցված է բազալտի կոպիտ մշակված քարերից: Հիմնական՝ արտադրական սենյակը երկու զույգ որմնամույթերի և ծածկի սիստեմի միջոցով բաժանվում է երեք մասի:

2010թ.-ին ձիթհանն ամբողջությամբ վերականգնվել է, կատարվել է ներքին ձևավորում՝ ներկայացնելով արտադրական կառույցում կտավատի ձեթի արտադրման տեխնոլոգիական ամբողջ պրոցեսը, պահպանված պատմական սարքերի վերաօգտագործմամբ, ցուցադրական, տեղեկատվական նյութերով, ժամանակակից լուսավորության և ձևավորման տարրերով (նկ. 11):

Նկ. 11. Տաթևի ձիթհանի ցուցադրությունները

Արցախի Տիգրանակերտի պեղումների թանգարանը: Տիգրանակերտը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի հարավ-արևելքում, Խաչենագետի աջ ափին: Այն հայկական հելլենիստական քաղաք է, կառուցվել է Ք.ա. 1-ին դարում, հայոց արքա Տիգրան Մեծի կողմից, որը նորաստեղծ հայկական կայսրության մեջ հիմնել էր իր անունը կրող չորս քաղաք: 2006-ին սկսվել են Արցախի Տիգրանակերտի պեղումները և ընթանում են առ այսօր: Արդյունքում գտնվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, քաղաքի կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին: 2008թ. պեղումների ժամանակ հայտնաբերված ամենակարևոր գտածոներից է հայերեն արձանագրությունը:

2010թ. մայիսին Տիգրանակերտի տարածքում գտնվող 18-րդ դարի կանգուն ամրոցում բացվել է պեղումների թանգարանը, որն այցելուներին ներկայացնում է 5-ամյա աշխատանքների ընթացքում հայտնաբերված ցուցանմուշները (նկ. 12)։

Նկ. 12. Տիգրանակերտի տարածքում գտնվող 18-րդ դարի ամրոցը: Թանգարանի ցուցասրահը

Տիգրանակերտի թանգարանը կազմված է նախասրահից և երկու ցուցասրահներից: Նախասրահում պայմաններ են ստեղծված Տիգրանակերտին վերաբերող ֆիլմերի ցուցադրություն համար, կատարվում է նաև հուշանվերների վաճառք, իսկ որմնախորշերում կազմակերպված է խեցանոթների ցուցադրություն: Առաջին սրահն ունի ներածական բնույթ: Այստեղ ներկայացված են Տիգրանակերտ քաղաքի հայտնագործման պատմությունը, ինչպես նաև կան տեղեկություններ պեղումների ընթացքի վերաբերյալ: Պատերի խորշերում ցուցադրվում են անտիկ և միջնադարյան ամբողջական անոթներ, ապակեծածկ սեղանի վրա՝ հնագիտական նյութեր, պեղումներին վերաբերող հրատարակություններ:

Երկրորդ սրահում ցուցատախտակներ են՝ տեքստային, գծագրական և լուսանկարային տեղեկություններով, ներկայացնող Տիգրանակերտի պեղումների ընթացքը: Այդ սրահում ցուցադրվում են նաև խեցեղեն, ապակե, քարե և ոսկրե առարկաներ, ճարտարապետական բեկորներ՝ խարիսխ, սյուն, քանդակազարդ խոյակներ, քիվի բեկորներ [9]:

Թանգարանի շնորհիվ ավելացել են այն այցելուների թիվը, ովքեր չկարողանալով բարձրանալ միջնաբերդ, հուշարձանի, պատմամշակութային այդ կարևոր շերտի հետ հաղորդակցվում են՝ դիտելով ցուցադրությունը: Թանգարան-ամրոցի ներքին բակում կազմակերպվում են տոնական միջոցառումներ, համերգներ:

Պատամամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության անձնակազմի հետ համատեղ կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ տոնակատարություններ, համերգներ, հանդիպումներ, որոնք իրականացվում են կրթական, ճանաչողական, հանրահռչակման ուղղություններով:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ հուշարձանների պահպանման, լիարժեք և համակողմանի ցուցադրության, ինչպես նաև հանրահռչակման համար կարևորվում են հետևյալ միջոցառումները:

1. Բարեկարգման խնդիրների լուծում.
- ճանապարհներ դեպի հուշարձան, արահետներ, հաշվի առնելով նաև հաշմանդամների անարգել շարժումը,
- ավտոկայանատեղի,
- հասարակական սպասարկման սրահներ,
- հուշանվերների, գրքերի և բուկլետների վաճառքի սրահներ,
- մի քանի լեզուներով ժամանակակից տեղեկատվական վահանակների տեղադրում,
- գիշերային լուսավորության և ձայնային ժամանակակից համակարգի տեղադրում:
2. Առանձին արժեքավոր ճարտարապետական բեկորների և հնագիտական իրերի ցուցադրության կազմակերպում.
- բաց տարածքում,
- հուշարձանի ներսում,
- առանձին թանգարանային կառույցում՝ հագեցած արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներով:
3. Հուշարձանի տարածքում կամ թանգարանի շենքում մի շարք միջոցառումների կազմակերպում, որոնք հնարավորություն կտան հասարակության լայն խավերին, հատկապես երիտասարդ սերնդին, հաղորդակից դառնալ Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններին, ինչպես նաև տվյալ վայրի հետ կապված հիշողություններին.
- դասախոսություններ,
- ֆիլմերի դիտումներ,
- կրթական ծրագրեր,
- ազգային, մշակութային տոներ, թատերականացված ներկայացումներ, երգչախմբային, պարային համերգներ,
- ազգային կերակրատեսակների համտեսումներ:

Н.Э. Мхитарян,
А.Ю.Сафарян

МУЗЕЕФИКАЦИЯ ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ В АРМЕНИИ

Проанализированы задачи музеефикации и сохранения историко-архитектурных памятников разных исторических слоев, находящихся на территории нынешней Армении. Рассматренны экспозиции под открытым небом и в зданиях музеев-заповедников Эребуни, Шенгавит, Кармир блур, Мецамор, Звартноц, а также музея Эчмиадзинского Кафедрального Собора, маслобойни Татевского монастыря (как образца музеефикации производственного строения) и музея Тигранакерта в Арцахе.

Представленны те мероприятия, осуществление которых будет способствовать сохранению, полноценному разностороннему показу и популяризации архитектурных памятников.

Ключевые слова: *культурная ценность, архитектурный памятник, музей, экспозиция.*

N.E. Mkhitaryan,
A.Yu. Safaryan

MUSEUMIFICATION OF HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS IN ARMENIA

The issue of museumification and preservation of historical-architectural monuments of different historical layers, located on the Armenia's present-day territory is analyzed. Exhibits in the open air and in the building of the Museum-reserves Erebuni, Shengavit, Karmir blur, Metsamor, Zvartnots, as well as the Museum of Echmiadzin Cathedral, oil mill of Tatev monastery and the Museum of Tigranakert in Artsakh have been considered. The activities that promote the conservation, comprehensive performance and popularization of architectural monuments are presented at the end.
Keywords: *cultural value, architectural monument, museum, exposition.*

Գրականություն

1. **https:/www.google.am**/armenpress.am/arm/news/716638/.
2. **hy.wikipedia.org**/wiki/Էրեբունի_թանգարան.
3. **http://www.dominoefect.am**/product/ru/museumexhibitions/8458/#sthash.8bFsCdRc.dpuf.
4. **Հովհաննիսյան Ջ.** Զվարթնոցը կյանքի կոչողը //Գիտություն և տեխնիկա. – 1985. - №10. - էջ 43- 44:
5. **Կանոնադրություն** «Զվարթնոց» Պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղի:
6. **Պողոսյան Դ.** Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր. - Երևան, 2008. - էջ 150:
7. **Ղաֆադարյան Կ.Գ.** Միջնադարյան Հայաստանի թանգարաններ, գանձատները և ավանդատները // Անդաստան. - Փարիզ, 1962. - N 13. - էջ 97-114:
8. **Ղաֆադարյան Կ.Գ.** Հայաստանի թանգարանների պատմությունից // Լրաբեր հասարակական գիտությունների. – 1972. - N 10. - էջ 20-35:
9. **Խաչատրյան Հ., Կիրակոսյան Լ.** Տիգրանակերտի հնագիտական թանգարանը // Թանգարան հանդես. - Երևան, 2010. - էջ 13:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Մխիթարյան Նարինե Էմիլի, ճ.թ. *(ՀՀ. ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասիստ., (094) 479594, n.mxitaryan@yandex.ru:* ***Սաֆարյան***

Աշոտ Յուրիի *(ՀՀ. ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասպիրանտ, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, կ.գ.ա., (077) 700904:*

Мхитарян Нарине Эмильевна, канд. архит. *(РА, г. Ереван) - НУАСА, проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (094)479594, n.mxitaryan@yandex.ru.* ***Сафарян Ашот Юрьевич*** *(РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, аспирант, проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, м.н.с., (077) 700904.*

Mkhitaryan Narine Emil, doctor of philosophy (Ph.D.) in Architecture *(RA, Yerevan) –NUACA, the Chair of Theory of Architecture, Reconstruction of Architectural-Historical Heritage, Fine Arts and History, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, Scientific Researcher, (094)479594 n.mxitaryan@yandex.ru.* ***Safaryan Ashot Yuri*** *(RA, Yerevan) – NUACA, the Chair of Theory of Architecture, Reconstruction of Architectural-Historical Heritage, Fine Arts and History, Postgraduate, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, Junior Scientific Researcher, (077) 700904.*

Ներկայացվել է՝ 27.06.2014թ.
Ընդունվել է տպագրության՝ 04.07.2014թ.